Թարմացվել է 01.12.2020թ.

Կոնվերս Բանկում (այսուհետ՝ Բանկ) ֆիզիկական անձանց համար (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի) բացվում են՝

- խնայողական բանկային հաշիվներ (այդ թվում՝ սոցիալական ապահովության և միանվագ դրամական վճարների հաշիվներ, սոցիալական փաթեթների, պատվովճարի գումարի, զինծառայողների վնասների հատուցման հատուկ հաշիվներ)
- առարկայազուրկ մետաղական հաշիվներ

Իրավաբանական անձանց (իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձ չհանդիսացող/իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություններ) համար բացվում են՝

- ընթացիկ բանկային հաշիվներ
- առարկայազուրկ մետաղական հաշիվներ
- կառուցապատողի հատուկ հաշիվներ

Առարկայազուրկ մետաղական հաշիվներ

Առարկայազուրկ մետաղական հաշիվները նախատեսված են անկանխիկ ոսկու հաշվառման համար: Ոսկու հաշվառման համար հիմք են հանդիսանում միայն ոսկու հարգը և կշիռը: Առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին չափվում է գրամներով: Մետաղական հաշիվները ոսկու համար կարող են բացվել միայն 999.9 հարգի ոսկով:

Ուշադրություն
Առարկայազուրկ մետրաղական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Համատեղ հաշիվներ

Համատեղ հաշիվների բացման դեպքում հաշվի բացման և վարման պայմանագիրը ստորագրվում է հաշիվը բացող անձանց կողմից:

Համատեղ հաշվով կարող են գործարքներ կատարվել՝

- բոլորի ստորագրությունների պարտադիր առկայության դեպքում, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով վավերացված լիազորագրերի ներկայացման դեպքում, կամ
- հաշիվը բացող անձանցից որևէ մեկի ստորագրության առկայության դեպքում՝ հաշվի բացման և վարման պայմանագրով նախատեսված կարգով:

Սոցիալական ապահովության /այսուհետ՝ կենսաթոշակային/ և միանվագ դրամական վճարների հաշիվներ

Հաշվի բացման համար ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից (այսուհետ՝ Լիազոր մարմին) Բանկին է տրամադրում վճարման ցուցակ, այդ թվում՝ սոցիալական ապահովության հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները:

Շահառուի կենսաթոշակային հաշիվը մինչ վերջինիս կողմից Բանկ ներկայանալը և բանկային հաշվի սպասարկման պայմանագիր կնքելը համարվում է չնույնականացված:

Բանկային հաշվին մուտքագրվում են բացառապես պարբերական դրամական վճարների գումարը, ինչպես նաև հաշվին առկա դրամական միջոցների դրական մնացորդի նկատմամբ Բանկի կողմից հաշվարկված տոկոսները կամ միանվագ դրամական վճարների գումարը:

Բանկային հաշվից ելքագրումներն իրականացվում են բացառապես լիազոր մարմնի և հաճախորդի կարգադրության հիման վրա:

Շահառուի անվամբ բացված միանվագ դրամական վճարների բանկային հաշվին առկա միջոցները վճարվում են մասնակի կամ ամբողջությամբ, իսկ բանկային հաշիվը, առանց շահառուի կամ այլ անձի և Բանկի միջև բանկային հաշվի սպասարկման պայմանագիր կնքելու, սպասարկվում է մինչև դրանում առկա միջոցներն ամբողջությամբ դուրս գրելը:

Սոցիալական փաթեթի հաշիվներ

Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում, ինչպես նաև կրթության, մշակույթի, գիտության և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազմակերպության աշխատակիցների հատուկ հաշիվների բացում և սպասարկում:

Մանրամասն տեղեկության համար ծանոթացեք **սոցիալական փաթեթի հաշվի ամփոփագրին:**

Պատվովճարի գումարի հաշիվներ

Պատվովճարի գումարի հաշիվը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելիս հաշվարկվող պատվովճարի տրամադրման նպատակով բացվող հատուկ հաշիվ է:

Պատվովճարի գումարի հաշիվներն ունեն սահմանափակ տնօրինման ուղղություններ՝

1. ՀՀ և ԱՀ պետական ու հավատարմագրված ոչ պետական կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններում միջին մասնագիտական և/կամ բարձրագույն և/կամ հետբուհական կրթական ծրագրերով ուսումնառության ուսման վարձի ֆինանսավորում,
2. ՀՀ և ԱՀ կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկի կանխավճարի և/կամ ամսական վճարի ֆինանսավորում,
3. ՀՀ և ԱՀ գյուղատնտեսական (ֆերմերային) գործունեության (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ) ֆինանսավորում:

Մանրամասների համար՝ **https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121842**

Զինծառայողների վնասների հատուցման հաշիվներ

Զինծառայողների վնասների հատուցման հաշիվը Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման նպատակով բացվող հատուկ հաշիվ է:

Մանրամասների համար՝ **https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141272**

Կառուցապատողի հատուկ հաշիվներ

Բանկային հաշիվ, որին կատարվում են կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրով գնորդի՝ կառուցապատողին կանխավճարային վճարումները:

Հաշվի բացման և փակման ընթացակարգերը, ժամկետները, սակագները, հաշվի սպասարկման և գործառնությունների իրականացման սակագները

Հաշվի բացում

Հաճախորդի համար հաշիվը բացվում է Ամփոփագրի «Անհրաժեշտ փաստաթղթերը» բաժնում ներկայացված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ նույն պահին, եթե չի առաջանում ներկայացված փաստաթղթերի լրացուցիչ ուսումնասիրություն կամ լրացման անհրաժեշտություն: Ընդ որում, այլ լեզուներով ներկայացված փաստաթղթերը պետք է ունենան «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանություն:

Հաշիվները բացվում են հետևյալ արժույթներով՝

- ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլար
- ԵՎՐՈ
- ՌԴ ռուբլի
- Առարկայազուրկ մետաղական հաշիվներ /ոսկի 999.9 հարգի/

Այլ արժույթով հաշիվներ կարող են բացվել հաճախորդի պահանջով, որոնց համար կարող են սահմանվել այլ սակագներ:

Հաշիվների բացման սակագներ	
Ֆիզիկական անձանց համար ՀՀ դրամով հաշիվներ	0 ՀՀ դրամ
Ֆիզիկական անձանց համար այլ արժույթով և առարկայազուրկ մետաղական (ոսկի) հաշիվներ	500 ՀՀ դրամ
Իրավաբանական անձանց հաշիվներ	1,000 ՀՀ դրամ
Կառուցապատողի հատուկ հաշիվներ	20,000 ՀՀ դրամ
Հաշվի նվազագույն մնացորդ	0 ՀՀ դրամ

Հաշվի սպասարկում

Բանկն իրականացնում է հաշվի/հաշիվների համալիր սպասարկում և հաճախորդի հանձնարարությամբ այն բոլոր հաշվարկային և դրամարկղային գործառնությունները, որոնք ՀՀ իրավական ակտերով արգելված չեն:

Բանկը հաճախորդի հաշիվների վարումն իրականացնում է, եթե հաշվի վարման ընթացքում բացակայում է ««Կոնվերս Բանկ» ՓԲԸ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգով» նախատեսված կամ ՀՀ օրենսդրությամբ գործող այլ սահմանափակումները:

Հաշիվների վարման սակագներ	
Ֆիզիկական անձանց հաշիվներ*	1,200 ՀՀ դրամ տարեկան
Իրավաբանական անձանց հաշիվներ*	4,800 ՀՀ դրամ տարեկան
Ֆիզիկական և իրավաբանական անձանց առարկայազուրկ մետաղական (ոսկի) հաշիվներ	0.1%, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը 10,000 ՀՀ դրամ Գանձումը կատարվում է հաշվի բացման օրվանից սկսված՝ տարին մեկ անգամ՝ տարեկան միջին մնացորդից, ընդ որում, եթե հաշիվը փակվում է տարվա ընթացքում, գանձումն իրականացվում է փակման պահին՝ տվյալ ժամանակահատվածի միջին մնացորդից:
Կենսաթոշակային հաշիվներ, այդ թվում՝ չնույնականացված	0 ՀՀ դրամ
Միանվագ դրամական վճարի հաշիվ	0 ՀՀ դրամ
Պատվովճարի գումարի հաշիվներ	0 ՀՀ դրամ
Զինծառայողների վնասների հատուցման հաշիվներ	0 ՀՀ դրամ
Կառուցապատողի հատուկ հաշիվներ	5,000 ՀՀ դրամ ամսական

* ***Հաշվով (այդ թվում՝ ցպահանջ) երկու և ավելի տարի գործարք չիրականացնելու դեպքում հաշվից ամսական գանձվում է 15,000 ՀՀ դրամ: Սույն սակագինը չի կիրառվում, եթե հաճախորդի որևէ հաշվով կատարվել են գործարքներ կամ վերջինս Բանկում ունի գործող ավանդ կամ որևէ ֆինանսավորում, ինչպես նաև չի տարածվում օրենքով սահմանված կարգով լուծարային գործընթացում գտնվող հաշվետերերի հաշիվների, արգելանքի տակ գտնվող բանկային հաշիվների վրա: Եթե երկու տարի և ավելի գործառնություն չիրականացված հաշվի մնացորդը փոքր է 15,000 ՀՀ դրամից/համարժեք արտարժույթից, գանձվում է ամբողջ մնացորդային գումարը և հաշիվը փակվում է:***

- Հաշվի վարման միջնորդավճարը գանձվում է հաճախորդի հաշվից՝ այդ հաշվի օգտագործման յուրաքանչյուր տարվա համար՝ միանվագ, ընդ որում հաշվի օգտագործման առաջին 12 ամիսների վճարը գանձվում է հաշվի բացման պահին,

իսկ յուրաքանչյուր հաջորդող 12 ամիսների վճարը՝ այդ ժամանակահատվածի առաջին 5 բանկային օրվա ընթացքում: Միջնորդավճարը ենթակա չէ վերադարձման հաշվի փակման դեպքում:

- Միջնորդավճարը հաճախորդի հաշվին համապատասխան ժամանակահատվածին հաջորդող առաջին 3 ամսվա ընթացքում չապահովելու դեպքում հաշիվը ենթակա է փակման:
- Պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառավարման մարմինների ՀՀ դրամով ընթացիկ հաշիվների վարման համար միջնորդավճար չի գանձվում:
- Կենսաթոշակային հաշիվների պարագայում, Հաճախորդը (հաշվի տերը) տարեկան մեկ անգամ՝ ոչ ուշ, քան վերջին անգամ Բանկ ներկայանալու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը, անձամբ Բանկ ներկայանալու միջոցով Բանկին հավաստում է ՀՀ-ում լինելը: Սույն կետում նշված պահանջը համարվում է շահառուի կողմից կատարված, եթե նա, անձամբ Բանկ ներկայանալով, հայտարարություն է ստորագրել ՀՀ-ում գտնվելու վերաբերյալ կամ նույնականացվել է և ստորագրել որևէ այլ փաստաթուղթ:

Հաշվի մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան պարզ տոկոսադրույք		Տարեկան տոկոսային եկամտաբերություն
ՀՀ դրամով խնայողական հաշիվներ	0.1%	0.1%
ՀՀ դրամով կենսաթոշակային հաշիվներ	0.5%	0.5%
Զնույնականացված սոցիալական ապահովության հաշիվներ	0%	-
Միանվագ դրամական վճարի հաշիվ	0%	-
Ցպահանջ հաշիվներ	0.1%	0.1%
Պատվովճարի գումարի հաշիվներ	7.5%	7.71%
Զինծառայողների վնասների հատուցման հաշիվ	4.25*	4.58%

** ՀՀ ԿԲ Խորհրդի որոշմամբ սահմանված վերաֆինանսավորման տարեկան տոկոսադրույք: Հիմք է ընդունվել ամփոփագրի թարմացման ամսաթվի դրությամբ գործող մեծությունը: Վերաֆինանսավորման գործող տոկոսադրույքի մեծությանը կարող եք տեղեկանալ www.cba.am ինտերնետային կայքից:*

Թղթակցային հաշիվների, հատուկ տարանցիկ և նպատակային հաշիվների դեպքում տոկոսները հաշվարկվում և վճարվում են համաձայն պայմանագրերի, մնացած դեպքերում տոկոսների վճարումը կատարվում է եռամսյակին հաջորդող առաջին հինգ բանկային օրվա ընթացքում:

Տարեկան տոկոսային եկամտաբերություն

Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են պարզ տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք Դուք, եթե ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները կանոնավոր վերաներդրվեին ավանդի տեսքով:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափի հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ ԿԲ ««Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը» Կանոնակարգ 8/02»-ով սահմանված բանաձևը.

$$APY=(1+r/n)^n-1,$$

որտեղ՝

- **APY** - տարեկան տոկոսային եկամտաբերություն
- **r** - տարեկան պարզ տոկոսադրույք
- **n** - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականություն

Ուշադրություն
Հաշվեգրման ենթակա տոկոսների դիմաց գանձվում է եկամտային հարկ: ՀՀ տարածքում տոկոսների համար եկամտային հարկը կհաշվարկվի 10% դրույքաչափով, իսկ ԱՀ տարածքում՝ 5% դրույքաչափով:
Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հաշվից անակցեպտ գանձումներ

Հաշվից/հաշիվներից կարող են անակցեպտ կարգով գանձումներ կատարվել.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Հաճախորդի հանձնարարականի հիման վրա,
2. Բանկի նկատմամբ առկա պարտավորությունների գումարի չափով,
3. Բանկի հետ կնքված այլ պայմանագրերով/համաձայնագրերով սահմանված այլ դեպքերում,
4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Հաշվի սառեցում

Բանկում հաշիվների (այդ թվում՝ առարկայազուրկ մետաղական) տնօրինումը սահմանափակվում է.

- Հաճախորդի դիմումի կամ հանձնարարականի հիման վրա,
- Վեց ամսվա ընթացքում Հաճախորդի կողմից Հաշվով որևէ գործառնություն չկատարվելու դեպքում, կենսաթոշակային հաշիվների դեպքում՝ մեկ տարվա ընթացքում,
- Եթե Հաճախորդի պարտավորության կատարման ապահովման միջոց է հանդիսանում Հաշվի դրամական միջոցների գրավը,
- Եթե Հաճախորդը Բանկի նկատմամբ ունի չկատարված պարտավորություններ, այդ թվում՝ երրորդ անձանց տրված երաշխավորության ուժով,
- Եթե Բանկի պահանջով Հաճախորդը սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող փաստաթղթեր և տեղեկատվություն,
- Եթե Հաճախորդի գործունեությունը կամ նրա կողմից կատարված որևէ գործառնություն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից դիտարկվել է որպես կասկածելի լինելու չափանիշներին համապատասխանող և դրա համար պահանջվող հիմնավոր փաստաթղթերը և/կամ փաստարկները չեն ներկայացվել նշված ժամկետներում,
- Եթե Հաճախորդի գործունեությունը դիտարկվել է կասկածելի,
- Եթե Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, հարկային մարմինների և այլ իրավասու մարմնի որոշմամբ արգելանք է դրվել Հաճախորդի հաշիվների վրա
- Հաճախորդի հետ կնքված այլ պայմանագր/եր/ով սահմանված դեպքերում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Հաշվի փակում

Բանկում հաշիվները (այդ թվում՝ առարկայազուրկ մետաղական) փակվում են (լուծվում է Ընթացիկ և/կամ խնայողական հաշվի /հաշիվների/ բացման և վարման պայմանագիրը).

- Հաճախորդի կողմից Պայմանագրով նախատեսված դրույթներից որևէ մեկի խախտման դեպքում,
- Հաշվում առկա դրամական միջոցները, Սակագներով Հաշվի նվազագույն մնացորդ սահմանված լինելու դեպքում, նվազագույն չափից պակաս լինելու և այդ մասին Բանկի կողմից զգուշացման (գրավոր կամ բանավոր) օրվանից մեկ ամսվա ընթացքում, եթե այլ ժամկետ սահմանված չէ Սակագներով, չվերականգնելու դեպքում,
- Սակագներով նախատեսված միջնորդավճարները սահմանված ժամկետում Հաճախորդի կողմից չվճարելու դեպքում,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ և ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում կամ այդ ակտերով նախատեսված այլ դեպքերում,
- եթե Հաճախորդի գործունեությունը կամ վերջինիս հետ գործարար հարաբերությունը Բանկի կարծիքով կարող է որևէ կերպ գործընկեր կամ միջազգային կազմակերպությունների մոտ առաջացնել Բանկի կողմից Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ոչ արդյունավետ մեխանիզմների կիրառման կասկածներ և/կամ բացասական ազդեցություն ունենալ Բանկի հեղինակության վրա (օրինակ, եթե Հաճախորդը կամ նրա հետ փոխկապակցված անձինք հայտնվում են Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անվտանգության Խորհրդի, Ամերիկայի Միացյալ Նահանգների կամ Եվրամիության կամ այլ հատուկ ցուցակված անձանց (սանկցիոն) ցանկերից որևէ մեկում),
- Հաշվի սառեցումից (տնօրինման սահմանափակումից) մեկ տարի հետո, ընդ որում Փակման ենթակա հաշվի մնացորդը երեք ամսվա ընթացքում չօգտագործելու դեպքում գանձվում է 1,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա

համար (եթե մնացորդը փոքր է 1,000 ՀՀ դրամ/համարժեք արտարժույթ գումարից, ապա գանձվում է ամբողջ մնացորդային գումարը, և հաշիվը փակվում է),
- Հաճախորդի փակման դիմումի ներկայացման դեպքում,
- Միանվագ դրամական վճարների հաշվին առկա միջոցներն ամբողջությամբ դուրս գրելուց հետո,
- ՀՀ նորմատիվ իրավական ակտերով դրա համար նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում:

Հաշվի փակման սակագներ	
Ֆիզիկական անձանց հաշիվներ	1,000 ՀՀ դրամ
Կենսաթոշակային հաշիվներ	0 ՀՀ դրամ
Միանվագ դրամական վճարի հաշիվ	0 ՀՀ դրամ
Իրավաբանական անձանց հաշիվներ	2,000 ՀՀ դրամ
Պատվովճարի գումարի հաշիվներ	0 ՀՀ դրամ
Զինծառայողների վնասների հատուցման հաշիվ	0 ՀՀ դրամ

Հաշվի փակման սակագինը կիրառվում է այն դեպքերում, երբ փակվում են հաճախորդի բոլոր խնայողական կամ ընթացիկ հաշիվները:

Հաճախորդը կարող է վերաբացել հաշիվը՝ նախկին հաշվեհամարի վերականգնմամբ:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է՝ հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:

Փաստաթղթերի տրամադրում առձեռն՝ Բանկի տարածքում (ներառյալ ԱԱՀ)	
Հաշվի քաղվածք, հաշվի շարժի վերաբերյալ տեղեկատվություն[1]	
Ֆիզիկական անձանց համար	ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարբերականությամբ (մեկ անգամ)՝ 0 ՀՀ դրամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարբերականությունից բացի՝ - Մինչև 3 տարի վաղեմության՝ 1,000 ՀՀ դրամ - 3 տարի և ավելի վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ (Բանկում պահպանված լինելու դեպքում)
Իրավաբանական անձանց համար	Մեկ անգամ (անկախ պարբերականությունից)՝ 0 ՀՀ դրամ Կրկնօրինակի դեպքում՝ - Մինչև 1 ամիս վաղեմության՝ 1,800 ՀՀ դրամ - 2 ամսից մինչև 1 տարի վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ - 1 տարուց մինչև 3 տարի վաղեմության՝ 12,000 ՀՀ դրամ - 3 տարի և ավելի վաղեմության՝ 24,000 ՀՀ դրամ (Բանկում պահպանված լինելու դեպքում)
Տարբեր հաստատություններ ներկայացնելու համար տեղեկանք՝ ընթացիկ և խնայողական հաշիվների վերաբերյալ	
Մեկ ամսվա ընթացքում բացված հաշիվների դեպքում[2]	5 000 ՀՀ դրամ
Ավելի վաղ բացված հաշիվների դեպքում	3 000 ՀՀ դրամ
Բանկի ինտերնետային կայքի միջոցով ներկայացված հայտի հիման վրա	3,000 ՀՀ դրամ
Կատարված գործարքների վերաբերյալ տեղեկանքներ/գրություններ	
Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող	3 000 ՀՀ դրամ
1 ամսից ավելի վաղեմություն ունեցող	5 000 ՀՀ դրամ
Կատարված փոխանցման SWIFT հաստատում	3,000 ՀՀ դրամ
Կատարված փոխանցման SWIFT հաստատում (հեռակառավարման համակարգերով հայտն ուղարկելու դեպքում)	2,000 ՀՀ դրամ

Փաստաթղթերի, գործարքի կատարման հիմքերի և փաստաթղթերի պատճեններ (յուրաքանչյուր փաստաթղթի համար)	
Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող	1 800 ՀՀ դրամ
Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող	3 000 ՀՀ դրամ
Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող	12 000 ՀՀ դրամ
Փաստաթղթերի, քաղվածքների կամ այլ փաստաթղթերի առաքում (ներառյալ ԱԱՀ)	
Ներհանրապետական և ԱՀ	
Ֆիզիկական անձանց համար	0
Իրավաբանական անձանց համար	500 ՀՀ դրամ
Միջազգային	
Օրենքով և պայմանագրով սահմանված լինելու դեպքում	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին
Այլ դեպքերում	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին + 1,500 ՀՀ դրամ
Պատվիրակված առաքման ծառայության միջոցով	
Ներհանրապետական և ԱՀ	3,000 ՀՀ դրամ
Միջազգային	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին + 3,000 ՀՀ դրամ
Այլ ծառայություններ	
Գործարքի վերաբերյալ ավտոմատ տեղեկատվության ուղարկում	1 SMS արժեքը 12 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) *Գանձումը կատարվում է խնայողական/ընթացիկ հաշվից*
Հաշիվներից կոմունալ վարձավճարների ավտոմատ գանձում	100 ՀՀ դրամ (ամսական)

[1] Նույն հաճախորդին տեղեկանքի և քաղվածքի միաժամանակյա տրամադրման և տեղեկանքի դիմաց գանձում նախատեսված լինելու դեպքում գանձումը կատարվում է միայն տեղեկանքի դիմաց:
[2] Մեկից ավելի գործող հաշիվ ունենալու պարագայում դիտարկվում է ավելի վաղ բացված հաշվի բացման ամսաթիվը՝ անկախ տեղեկանքում ներառվելու դրույթից:

Հաշվով կատարվող գործառնությունների սակագներ

Գործառնություններ կանխիկով

- **Կանխիկի մուտքագրում**
  - ✓ *Դրամարկղում*
  - ՀՀ դրամ և ԱՄՆ դոլար՝ 0
  - Եվրո և այլ արժույթ՝ ըստ օրական գնանշման
  - ✓ *Վճարային տերմինալով խնայողական/քարտային հաշվին մուտքագրում*
  - 100 - 50,000 ՀՀ դրամ՝ 100 ՀՀ դրամ
  - 50,001-200,000 ՀՀ դրամ՝ 200 ՀՀ դրամ
- **Կանխիկի տրամադրում հաշվետեր հաճախորդներին**[1]
  - ✓ *Հաշվին կանխիկ մուտքագրված գումարի դեպքում*[2]
  - ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և եվրո՝ 0
  - Այլ արժույթ՝ ըստ օրական գնանշման
  - Զինծառայողների վնասների հատուցման և պատվովճարի գումարի հաշիվներ՝ 0
  - Հաշվին կանխիկ մուտքագրված գումարի անկանխիկ փոխարկման արդյունքում առաջացած գումարի տրամադրում՝ 0
  - ✓ *Հաշվին անկանխիկ մուտքագրված գումարի դեպքում*
  - ՀՀ դրամ՝ 0.25%
  - ԱՄՆ դոլար՝ 0.40%
  - Եվրո և այլ արժույթ՝ ըստ օրական գնանշման

- կենսաթոշակային, միանվագ դրամական վճարների և սոցիալական փաթեթի հաշիվներից՝ 0
- Զինծառայողների վնասների հատուցման և պատվովճարի գումարի հաշիվներից՝ 0
- ✓ *Քարտային հաշվից[3], բացառությամբ բանկոմատների և POS տերմինալների միջոցով իրականացվող գործարքների, ինչպես նաև կենսաթոշակային և զինծառայողների վնասների հատուցման հաշիվների՝* 1% *(անկախ մուտքագրման եղանակից)*
- ✓ *Առարկայազուրկ մետաղական հաշվից ՀՀ դրամով ստանալու դեպքում՝* 0

- **Կանխիկի տրամադրում ոչ հաշվետեր հաճախորդներին**
  - ✓ *Այլ բանկերից փոխանցումով ստացված գումարների վճարում*
  - ՀՀ դրամ՝ 0.35%, նվազագույնը՝ 300 ՀՀ դրամ
  - Այլ արժույթ՝ 0.5%, նվազագույնը՝ 300 ՀՀ դրամ
  - ✓ *Ներբանկային փոխանցումով ստացված գումարների վճարում*
  - ՀՀ դրամ՝ 0.25%, նվազագույնը՝ 100 ՀՀ դրամ
  - ԱՄՆ դոլար և Եվրո՝ 0.40%, նվազագույնը՝ 100 ՀՀ դրամ
  - Այլ արժույթ՝ ըստ օրական գնանշման, նվազագույնը՝ 100 ՀՀ դրամ
- **Գանձապետարանից ստացված գումարների վճարում (նաև հետ վճարում)**
  - Մինչև 20,000 ՀՀ դրամ՝ 50 ՀՀ դրամ
  - 20,000 ՀՀ դրամ և ավելի՝ 0.25%, նվազագույնը 100 ՀՀ դրամ
- **Արագ փոխանցման համակարգերի միջոցով ստացված գումարների վճարում՝** 0
- **Հնամաշ դրամանիշերի փոխանակում**
  - ՀՀ դրամ՝ անվճար
  - Այլ արժույթ՝ 3.0%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ
- **ՀՀ մետաղյա դրամանիշերի խոշորացում**
  - ✓ *Հաշվետեր հաճախորդների համար՝* 0
  - ✓ *Ոչ հաշվետեր հաճախորդների համար*
  - մինչև 50 հատ՝ անվճար
  - 50-ից ավելի՝ 3.0%, նվազագույնը՝ 100 ՀՀ դրամ
- **Օտարերկրյա քաղաքացիներին ԱԱՀ գումարների վերադարձի միջնորդավճար՝** վերադարձված գումարի 10%

[1] Մասնաճյուղերից 5 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումար կանխիկացնելու դեպքում հաճախորդը պետք է մեկ օր առաջ ներկայացնի համապատասխան հայտ:
[2] Սակագինը գործում է 2008թ.-ի ապրիլի 30-ից հետո կատարված կանխիկ մուտքերի նկատմամբ՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով:
[3] Քարտային հաշվից կանխիկացման համար գործում է նշված սակագինը, եթե տվյալ քարտի պայմաններով քարտային հաշվից կանխիկացման ավելի բարձր սակագին սահմանված չէ:

Փոխանցումներ[4, 7, 13]

- **Ներբանկային փոխանցումներ ՀՀ դրամով**
  - ✓ *Հաշվետեր հաճախորդների համար՝* 0
  - ✓ *Ոչ հաշվետեր հաճախորդների համար՝* 0.1%, նվազագույնը՝ 300 ՀՀ դրամ
  - ✓ *Աշխատավարձային փաթեթի կատարում*
  - Վճարման հանձնարարականը մինչև ժ. 16:00 ներկայացնելու դեպքում նույն օրը քարտային հաշիվների համալրում՝ 0
  - Վճարման հանձնարարականը ժ. 16:00-ից 18:00 ներկայացնելու դեպքում նույն օրը քարտային հաշիվների համալրում՝ 30,000 ՀՀ դրամ (միանվագ)
- **Դրամարկղում, Ինտերնետ և Մոբայլ Բանկ համակարգերի միջոցով խնայողական հաշվից քարտին փոխանցում**
  - Փոխանցում Կոնվերս Բանկի ArCa, Visa և Mastercard քարտին՝ 0.1%
  - Փոխանցում ԱրՔա համակարգի անդամ բանկի ArCa, Visa և Mastercard քարտին՝ 0.5%
  - Փոխանցում ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող բանկի Visa և Mastercard քարտին (ներառյալ ՎՏԲ-Հայաստան բանկը)
- **ՀՀ այլ բանկեր փոխանցումներ ՀՀ դրամով**
  - ✓ *Հաշվետեր հաճախորդների համար*
  - Հաջորդ բանկային օրը փոխանցման պայմանով՝ 0

- Նույն բանկային օրը փոխանցման պայմանով («Շտապ» պայմանով)[5]՝ 0.1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 10,000 ՀՀ դրամ
  - ✓ *Ոչ հաշվետեր հաճախորդների համար*[6]
  - Մինչև 50,000 ՀՀ դրամ ներառյալ՝ 100 ՀՀ դրամ
  - 50,001-100,000 ՀՀ դրամ՝ 200 ՀՀ դրամ
  - 100,000-ից ավելի ՀՀ դրամ՝ 0.1%, նվազագույնը՝ 300 ՀՀ դրամ
- **Տեխնիկական զննության կտրոնների տրամադրման դիմաց իրականացվող փոխանցումներ**
  - Պետական տուրք՝ 200 ՀՀ դրամ
  - Տեխնիկական զննության անցկացման վճար՝ 200 ՀՀ դրամ
  - Բնապահպանական վճար՝ 200 ՀՀ դրամ
  - Տրանսպորտային միջոցի գույքահարկ՝ 200 ՀՀ դրամ
- **Տեխնիկական զննության կտրոնի խոտանման կամ կորստի դեպքում կտրոնի կրկնօրինակի տրամադրում՝** 2,000 ՀՀ դրամ
- **Ներբանկային փոխանցումներ արտարժույթով և առարկայազուրկ մետաղներով**
  - Հաշվետեր հաճախորդների համար՝ 0
  - Ոչ հաշվետեր հաճախորդների համար՝ 0.1%, նվազագույնը՝ 300 ՀՀ դրամ
- **Վճարման հանձնարարականի կատարում՝ փոխանցող հաճախորդի հաշվին (OUR)**[5]
  - ✓ *Հանձնարարականը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում*
  - ԱՄՆ դոլար և Եվրո՝ 0.14%, նվազագույնը՝ 7,500 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
  - ՌԴ Ռուբլի՝ 0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 30,000 ՀՀ դրամ
  - Այլ արժույթով[8, 9]՝ 0.15%, նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
  - Առարկայազուրկ մետաղական հաշիվներով (ոսկի)[8]՝ Գործարքը կատարելու պահի դրությամբ փոխանցվող մետաղի՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամային արժեքի 0.15%, նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ
  - ✓ *Հանձնարարականը հեռակառավարման համակարգերից (ՀԾ-Ինտերնետ Բանկ, ՀԾ «Բանկ-հաճախորդ») որևէ մեկով ներկայացնելու դեպքում*
  - ԱՄՆ դոլար և եվրո՝ 0.1%, նվազագույնը՝ 7,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 45,000 ՀՀ դրամ
  - ՌԴ ռուբլի՝ 0.08%, նվազագույնը՝ 4,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 25,000 ՀՀ դրամ
  - Այլ արժույթով[8, 9]՝ 0.13%, նվազագույնը՝ 12,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
- **Guaranted OUR (գումարը շահառուին է հասնում ամբողջական)**
  - ✓ *Հանձնարարականը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում*
  - ԱՄՆ դոլար՝ «OUR» տարբերակի ԱՄՆ դոլարի սակագին՝ գումարած 15,000 ՀՀ դրամ
  - Մինչև 12,500 (ներառյալ) եվրո գումարի դեպքում՝ 12,000 ՀՀ դրամ
  - 12,500-ից ավելի եվրո գումարի դեպքում՝ 0.1%, նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
  - ✓ *Հանձնարարականը հեռակառավարման համակարգերից (ՀԾ-Ինտերնետ Բանկ, ՀԾ «Բանկ-հաճախորդ») որևէ մեկով ներկայացնելու դեպքում*
  - ԱՄՆ դոլար՝ «OUR» տարբերակի ԱՄՆ դոլարի սակագին՝ գումարած 15,000 ՀՀ դրամ
  - Մինչև 12,500 եվրո գումարի դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ
  - 12,500-ից ավելի եվրո գումարի դեպքում՝ 0.1%, նվազագույնը՝ 13,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
- **Վճարման հանձնարարականի կատարում՝ ստացողի հաշվին (BEN)**[5]
  - ✓ *Հանձնարարականը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում*
  - ԱՄՆ դոլար և եվրո՝ 5,000 ՀՀ դրամ
  - Այլ արժույթ[9]՝ 0.15%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
  - ✓ *Հանձնարարականը հեռակառավարման համակարգերից (ՀԾ-Ինտերնետ Բանկ, ՀԾ «Բանկ-հաճախորդ») որևէ մեկով ներկայացնելու դեպքում*
  - ԱՄՆ դոլար և եվրո՝ 4,000 ՀՀ դրամ
  - Այլ արժույթ[9]՝ 0.13%, նվազագույնը՝ 4,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 45,000 ՀՀ դրամ
- **«Շտապ» պայմանով փոխանցումների դեպքում ի հավելումն համապատասխան սակագնի գանձվում է**[5] 10,000 ՀՀ դրամ
- **ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված օֆշորային տարածքներում գրանցված ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից/օգտին ԱՄՆ դոլարով վճարման հանձնարարականի կատարում՝** փոխանցող հաճախորդի հաշվին (OUR)[8, 10]՝ 0.3%, նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 145,000 ՀՀ դրամ
- **Փոխանցման փնտրման, պայմանների փոփոխման, հետ կանչման հանձնարարականի կատարում**[8, 11]
  - ՀՀ դրամ՝ 2,000 ՀՀ դրամ
  - ՌԴ ռուբլի՝ 10,000 ՀՀ դրամ

- ԱՄՆ դոլար[12]՝ 25,000 ՀՀ դրամ
- Այլ արժույթ և առարկայազուրկ մետաղական հաշիվ[12]՝ 30,000 ՀՀ դրամ
- Ներբանկային փոխանցում (բոլոր արժույթներով)՝ 1,000 ՀՀ դրամ

- **Փոխանցման հետ վերադարձ թղթակից բանկի կողմից**[8]
  - ՀՀ դրամ՝ 0
  - ՌԴ ռուբլի՝ 10,000 ՀՀ դրամ
  - Այլ արժույթ և առարկայազուրկ մետաղական հաշիվ՝ 25,000 ՀՀ դրամ

[4] Փոխանցումները (այդ թվում՝ նաև մետաղական հաշվով) կատարվում են Բանկում մուտքագրման պահից ոչ ուշ, քան հաջորդ բանկային օրը և համարվում են կատարված, եթե առկա է Բանկի որևէ թղթակցային հաշվից նշված գումարի փաստացի դուրս գրման վավերացումը:

[5] ՀՀ դրամով փոխանցումները կարող են կատարվել նույն բանկային օրը միայն վճարման հանձնարարականը «ՀԾ-Ինտերնետ Բանկ» և «ՀԾ Բանկ-հաճախորդ» համակարգերից որևէ մեկով մինչև ժ. 15:00-ն, իսկ թղթային տարբերակով մինչև ժ. 14:00-ն ներկայացնելու դեպքում: Նշված ժամերից հետո ներկայացված հանձնարարականները կկատարվեն հաջորդ բանկային օրը:
«Շտապ» պայմանով փոխանցումները կարող են կատարվել նույն բանկային օրը միայն մինչև ժ. 15:00-ն ներկայացնելու դեպքում համապատասխան միջնորդավճարի գանձման դեպքում:
50 մլն ՀՀ դրամ և ավելի գումարի փոխանցման դեպքում Բանկը կարող է չկատարել «Շտապ» պայմանով փոխանցումը: Ամսվա վերջին աշխատանքային օրը ներկայացված ՀՀ պետական բյուջե «Շտապ» պայմանով փոխանցումները կատարվում են առանց համապատասխան միջնորդավճարի գանձման:
Արտարժույթով փոխանցումները կատարվում են հետևյալ ռեժիմներով.
ԱՄՆ դոլարով և եվրոյով մինչև ժ. 15:00-ն վճարման հանձնարարականները ներկայացնելու դեպքում փոխանցվում են նույն բանկային օրը, դրանից հետո ներկայացվածները՝ հաջորդ բանկային օրը: «Շտապ» պայմանով փոխանցումները կարող են կատարվել նույն բանկային օրը միայն մինչև ժ. 17:00-ն ներկայացնելու դեպքում համապատասխան միջնորդավճարի գանձման դեպքում:
ՌԴ ռուբլիով մինչև ժ. 12:00-ն ներկայացված վճարման հանձնարարականները փոխանցվում են նույն բանկային օրը, դրանից հետո ներկայացվածները՝ հաջորդ բանկային օրը: «Շտապ» պայմանով փոխանցումները կարող են կատարվել նույն բանկային օրը միայն մինչև ժ. 14:00-ն ներկայացնելու դեպքում՝ համապատասխան միջնորդավճարի գանձման դեպքում:
Այլ արժույթներով փոխանցումները կատարվում են 3 բանկային օրվա ընթացքում:

[6] Ոչ հաշվետեր հաճախորդի կողմից փոխանցումը կատարվում է միայն հաջորդ բանկային օրը:

[7] Բանկը՝ համաձայն առկա տեղեկագրերի, կարող է ինքնուրույն, առանց հաճախորդի նախնական համաձայնության, ընտրել միջոցների փոխանցման ճանապարհը (միջնորդ բանկին) այն դեպքում, երբ փոխանցման ամբողջական ճանապարհը (միջնորդ բանկը) նշված չէ հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականում:

[8] Սակագինը ներառում է թղթակից բանկերի միջնորդավճարները, իսկ երրորդ բանկերի ծախսերը, առկայության դեպքում, գանձվում են լրացուցիչ՝ ըստ փաստացի մեծության:

[9] Ոչ հաշվետեր հաճախորդների այլ արժույթով փոխանցումները կատարվում են միայն «BEN» տարբերակով:

[10] Ուշադրություն՝ 2019 թվականի հունվարի 1-ից Արաբական Միացյալ Էմիրություններ ցանկացած արժույթով իրականացվող միջազգային վճարման հանձնարարականների մանրամասներում լրացվող տվյալներից բացի, ելնելով փոխանցման նպատակից՝ հաճախորդը պետք է նշի նաև փոխանցման նպատակին համապատասխան կոդ՝ ըստ ներկայացվող ցանկի: Եթե հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականում բացակայում է համապատասխան կոդի նշումը, Բանկը կարող է ինքնուրույն և իր հայեցողությամբ, առանց հաճախորդի նախնական համաձայնության, ընտրել ցանկում ներկայացված կոդերից մեկը:

[11] Եթե հանձնարարականի կատարման արդյունքն անբավարար է, և դա տեղի է ունեցել Բանկից անկախ պատճառներով, ապա վճարված միջնորդավճարի գումարը ենթակա չէ վերադարձման:

[12] Վեց ամսից ավելի վաղեմություն ունեցող փոխանցումների վերաբերյալ հարցումների դեպքում հաճախորդից լրացուցիչ կգանձվի 30,000 ՀՀ դրամ:

[13] Ընթացիկ, խնայողական և քարտային հաշիվներ ունեցող հաճախորդները համարվում են հաշվետեր հաճախորդներ, սակայն քարտային հաշիվներով փոխանցումների նշված սակագները գործում են, եթե տվյալ քարտի պայմաններով քարտային հաշիվներով փոխանցումների համար այլ սակագին սահմանված չէ:

Հեռահար սպասարկում

Բանկի ծառայությունները մատուցվում են նաև հեռահար կապի միջոցներով, որոնց պայմանները ներկայացված են հետևյալ հղումներով՝

Converse Առցանց Բանկ / Converse Mobile - https://conversebank.am/hy/internet-banking/
SMS – Converse / USSD - https://conversebank.am/hy/sms-converse-ussd/

Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Ֆիզիկական անձ (բացառությամբ անհատ ձեռնարկատեր) հաճախորդների դեպքում

Հաճախորդի կողմից ներկայացվող
Անձը հաստատող փաստաթուղթ
Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (պահանջվում է միայն ՀՀ ռեզիդենտների և/կամ քաղաքացիների դեպքում), չի պահանջվում, եթե հաճախորդը ներկայացնում է նույնականացման քարտը, որտեղ ամրագրված է ՀԾՀ
Բանկի կողմից տրամադրվող ձևաթղթերով
Հաշվի բացման դիմում ֆիզիկական անձ հաճախորդների համար
FATCA հարցաթերթիկ ֆիզիկական անձ հաճախորդների համար

Հաճախորդի ռեզիդենտ իրավաբանական անձ, իրավաբանական անձ չհանդիսացող/իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն (այսուհետ՝ իրավաբանական անձ) լինելու դեպքում

Հաճախորդի կողմից ներկայացվող
Կանոնադրություն
Համապատասխան կազմակերպաիրավական տեսակի իրավաբանական անձանց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմնադրի որոշում կամ հիմնադիրների ընդհանուր (հիմնադիր) ժողովի արձանագրություն, եթե հիմնադր/ներ/ի (բաժնետերեր, մասնակիցներ) բաժնեմասերի և այլ տվյալների մասին տեղեկատվությունները բացակայում են կանոնադրությունում, ընդ որում՝ • բաժնետերերի կամ մասնակիցների ֆիզիկական անձ լինելու դեպքում՝ տեղեկություն բաժնեմասերի չափի մասին, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, գրանցման հասցե, հեռախոսահամար (առկայության դեպքում) • բաժնետերերի կամ մասնակիցների իրավաբանական անձ լինելու դեպքում՝ կազմակերպության կանոնադրություն, պետական գրանցման վկայական, բաժնետիրական ընկերության դեպքում՝ 5%-ից ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի վերաբերյալ տեղեկանք Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայից, ՀՎՀՀ, եթե ներառված չէ պետական գրանցման վկայականում
«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու դեպքում՝ համապատասխան լիցենզիան (առկայության դեպքում)
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված պետական գրանցման/հաշվառման վկայական
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ/հարկային կոդ), եթե այն ներառված չէ պետական գրանցման վկայականում
Կանոնադրությամբ սահմանված ղեկավար անձի/անց/ անձը հաստատող փաստաթղթ/եր/ի պատճեն/ներ
Բանկի կողմից տրամադրվող ձևաթղթերով
Հաշվի բացման դիմում իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար
Հաճախորդի հաշվի կարգադրիչների Ստորագրության նմուշների և կլոր կնիքի դրոշմի քարտ
FATCA հարցաթերթիկ իրավաբանական անձ հաճախորդների համար

Հաճախորդի ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ լինելու դեպքում

Հաճախորդի կողմից ներկայացվող
Կանոնադրություն
Հիմնադիր փաստաթղթերը տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով (certificate of incumbency, certificate of incorporation և այլն)
Տեղեկություններ բաժնետերերի, մասնակիցների մասին, եթե բացակայում են կանոնադրությունում, ընդ որում՝ • բաժնետերերի կամ մասնակիցների ֆիզիկական անձ լինելու դեպքում՝ տեղեկություն բաժնեմասերի չափի մասին, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, գրանցման հասցե, հեռախոսահամար (առկայության դեպքում)

- բաժնետերերի կամ մասնակիցների իրավաբանական անձ լինելու դեպքում՝ կազմակերպության կանոնադրություն, պետական գրանցման վկայական, բաժնետիրական ընկերության դեպքում 5%-ից ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի վերաբերյալ տեղեկանք, ՀՎՀՀ

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու դեպքում՝ համապատասխան լիցենզիան (առկայության դեպքում)

Տվյալ երկրի համապատասխան մարմնի կողմից տրված պետական գրանցման վկայական

Կանոնադրությամբ սահմանված ղեկավար անձի/անց/ անձը հաստատող փաստաթղթ/եր/ի պատճեն/ներ

Բանկի կողմից տրամադրվող ձևաթղթերով

Հաշվի բացման դիմում իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար

Հաճախորդի հաշվի կարգադրիչների Ստորագրության նմուշների և կլոր կնիքի դրոշմի քարտ (Բանկում համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից հաստատված կամ Բանկում չհաստատվելու դեպքում օրենքով սահմանված կարգով վավերացված (նոտարի, ապոստիլի, հյուպատոսական վավերացում))

FATCA հարցաթերթիկ իրավաբանական անձ հաճախորդների համար

Անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում

Հաճախորդի կողմից ներկայացվող

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված պետական գրանցման վկայական

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու դեպքում՝ համապատասխան լիցենզիան (առկայության դեպքում)

ՀՎՀՀ (հարկային կոդ), եթե այն ներառված չէ պետական գրանցման վկայականում

Անձը հաստատող փաստաթուղթ

ՀԾՀ կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (պահանջվում է միայն ՀՀ ռեզիդենտների և/կամ քաղաքացիների դեպքում), չի պահանջվում, եթե հաճախորդը ներկայացնում է նույնականացման քարտը, որտեղ ամրագրված է ՀԾՀ

Բանկի կողմից տրամադրվող ձևաթղթերով

Հաշվի բացման դիմում իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար

Հաճախորդի հաշվի կարգադրիչների Ստորագրության նմուշների և կլոր կնիքի դրոշմի քարտ (կնիքի առկայության դեպքում)

FATCA հարցաթերթիկ ֆիզիկական անձ հաճախորդների համար

Բանկի կողմից, ըստ անհրաժեշտության, կարող են պահանջվել նաև լրացուցիչ փաստաթղթեր հաշվի բացման, ինչպես նաև հաճախորդի հետագա սպասարկման ժամանակ:

Ներկայացված փաստաթղթերը հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով չլինելու դեպքում պահանջվում է դրանց ապոստիլիզացված կամ նոտարական վավերացմամբ թարգմանություն վերը նշված լեզուներով:

Ուշադրություն

Հաշիվներով գործառնությունները կատարվում են համապատասխան հաշվի արժույթով՝ բացառությամբ արտարժութի փոխարկման գործառնությունների: Վերջիններս կատարվում են այդ պահին Բանկում գործող համապատասխան փոխարժեքով:

«Սակագներ և դրույքներով» նախատեսված վճարները գանձվում են ՀՀ դրամով հաշիվներից, իսկ դրանց բացակայության դեպքում գանձումները կատարվում են այլ արժույթով հաշիվներից՝ գանձման օրվա դրությամբ Բանկի համապատասխան արժույթի համար նախատեսված առքի անկանխիկ փոխարժեքով:

Արտարժույթով գումարի նկատմամբ տոկոսներով արտահայտված միջնորդավճարները հաշվարկվում և գանձվում են ՀՀ դրամով՝ գանձման օրվա դրությամբ համապատասխան արժույթի համար նախատեսված վաճառքի անկանխիկ փոխարժեքով:

Բանկն իրավասու է փոփոխել և լրացնել «Սակագներ և դրույքները»՝ պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով այդ մասին հաճախորդներին՝ սեփական ինտերնետային էջում (www.conversebank.am) հաղորդագրություն հրապարակելով, Բանկի տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով, փոստով

ծանուցումն առաքելու միջոցով և հաճախորդի կողմից ընտրված Բանկի կողմից առաջարկվող այլ եղանակներով տրամադրելու միջոցով, որը համարվում է Հաճախորդի պատշաճ իրազեկում:

Բանկը պատասխանատվություն չի կրում.

- Հաճախորդի կողմից տրված թերի կամ սխալ տվյալներով հանձնարարականների հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

- Բանկից դուրս տեղի ունեցած հաղորդակցման ուղիների աշխատանքի խափանման պատճառով առաջացած ուշացումների և վնասների համար:

- Անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) ազդեցության, այդ թվում՝ տարերային աղետների, համաճարակների, գործադուլների, շրջափակումների, հեղաշրջումների, ռազմական գործողությունների, հեղափոխությունների, օրենսդրության մեջ փոփոխությունների, պետական մարմինների որոշումների հետևանքով առաջացած ուշացումների, վնասների, կորուստների համար:

Բանկը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին:

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ կառավարության հետ կնքած համաձայնագրի պայմաններին համապատասխան, Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կամ օրենքով սահմանված կարգով այլ իրավասու մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Դրանք արտացոլվում են հաճախորդի բանկային հաշիվների քաղվածքներում, որոնք Բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված կարգով տրամադրվում են հաճախորդին:

Հատուկ բանկային և միանվագ դրամական վճարների հաշիվներին մուտքագրված (առկա) միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց կամ հաճախորդի սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ, նորմատիվ իրավական ակտերով, պայմանագրերով և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

Առանց հաճախորդի համաձայնության կենսաթոշակային և միանվագ դրամական վճարների հաշիվներից միջոցների հետգանձում կամ ՀՀ պետական բյուջե վերադարձ կարող է իրականացվել Լիազոր մարմնի կարգադրության (պահանջի) հիման վրա, կամ միանվագ դրամական վճարները՝ շահառուների կողմից 12 ամսվա ընթացքում ստանալու պահանջ չներկայացվելու դեպքում:

Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Ավանդի արժութային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		16 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		7 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Խորենացի 15 («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն)
Հեռախոս՝ +374 10 583514

Վեճերի եվ տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով (ֆիզիկական անձանց դեպքում):

Ծանուցում ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15
«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ
Հեռախոս՝ (+ 37460) 70 11 11
Ֆաքս՝ (+ 37410) 58 24 21
Էլ. հասցե՝ info@fsm.am

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի **https://www.conversebank.am** ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
  Viber՝ +374 95 511211
  Skype՝ conversebank-callcenter